

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ո Ւ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՍՈՒՐԵՆ  
ԿԱՐԱՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԺԱՄԸ  
15.00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

### Մասնակցում էին.

- |                     |   |
|---------------------|---|
| Ռոբերտ Մակարյան     | - ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ   |
| Արամ Բաղայան        | - ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ                   |
| Արմեն Կարապետյան    | - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ղեկավար                             |
| Էդվարդ Կիրակոսյան   | - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության տնօրեն  |
| Անդրանիկ Ալեքսանյան | - Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն                               |
| Սամվել Զաքարյան     | - Հայաստանի դեղ արտադրողների և ներմուծողների միության գործադիր տնօրեն                                 |
| Գեղամ Գալստյան      | - «Հայրենական ապրանքարտադրողների միություն» հասարակական կազմակերպության անդամ                         |
| Ենոք Ազարյան        | - «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն (կառավարման խորհրդի քարտուղար) |

Նաև՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի օգնական Էրիկ Գրիգորյանը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի մամուլի քարտուղար Աննա Օհանյանը, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ: ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանը հնչեցրեց կառավարման խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերը՝

## ՀԱՐՑ 1

Ստանդարտացման ազգային մարմնի կառավարման խորհրդի նախագահի ընտրություն

## ՀԱՐՑ 2

Այլ հարցեր

1. **«Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, կառավարման խորհրդի քարտուղար Ենոք Ազարյանն** առաջարկեց նիստի օրակարգում, որպես լրացուցիչ հարց ընդգրկել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը, քննարկել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության շահութաժնիների, ինչպես նաև Ստանդարտացման ազգային մարմնի գործարար ծրագիրը կառավարման խորհրդի անդամներին նախապես ներկայացնելու վերաբերյալ հարցերը:

## ՀԱՐՑ 1

Ստանդարտացման ազգային մարմնի կառավարման խորհրդի նախագահի ընտրություն

**Լսեցին՝**

**ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Արամ Բադալյանն առաջարկեց** Ստանդարտացման ազգային մարմնի կառավարման խորհրդի նախագահի պաշտոնում ընտրել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանին:

**Որոշեցին՝**

Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

## ՀԱՐՑ 2

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվ

### **Լսեցին՝**

**«Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, կառավարման խորհրդի քարտուղար Ենոք Ազարյանը** ներկայացրեց «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝

### **Որոշեցին՝**

Առաջարկությունն ընդունվեց միաձայն

### **ՀԱՐՑ 3**

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության շահաբաժինների մասին

### **Լսեցին՝**

**«Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, կառավարման խորհրդի քարտուղար Ենոք Ազարյանը** ներկայացրեց տեղեկատվությունը, այն մասին որ 2017 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության պետական բաժնեմասի գծով պարտավորությունը ՀՀ պետական բյուջեի հանդեպ կազմում է շուրջ 45 մլն դրամ, որը գոյացել է վերջին տարիներին՝ Ինստիտուտի հասույթի կտրուկ կրճատման հետևանքով: Ընդ որում, հասույթի կրճատումը պայմանավորված է եղել ոլորտի բարեփոխումներով, որոնց արդյունքում սերտիֆիկացման պահանջարկը զգալիորեն նվազել է: Հաշվի առնելով, որ այդ պարտավորության մարումը չափազանց բարդ է և խիստ բացասական ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական կայունության վրա, առաջարկվում է բաժնեմասի գծով պարտավորությունը ներդնել Ընկերության կանոնադրական կապիտալում կամ Ընկերությանն ազատել շահութաբաժինների վճարման պարտականությունից՝ չբաշխված շահույթը ռազմական արդյունաբերության ստանդարտացման աշխատանքների իրականացման նպատակներով օգտագործելու համար:

Մասնավորապես, Ստանդարտների ազգային ինստիտուտը կարևոր դերակատարում ունի ռազմական արդյունաբերության զարգացման ոլորտում, քանի որ ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ մշակվում և ընդունվում են

ռազմական ոլորտի ազգային ստանդարտները: Այդ ստանդարտների միջոցով ապահովվում է ռազմական նպատակով պետական գնումների արդյունավետությունը, արտադրվող ռազմական մթերքի որակի երաշխավորումը, ռազմական արդյունաբերության համալիրի ընկերությունների գործունեության ու պետության հետ փոխհարաբերությունների արդյունավետությունը, ծառայող անձնակազմի հանդերձանքին ներկայացվող պահանջների սահմանումը և այլն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության կողմից շահութաբաժինների վճարումից ազատված են ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի առևտրային կազմակերպությունները, առաջարկվում է նույն շարժառիթներով շահութաբաժինների վճարումից ազատել Ստանդարտների ազգային ինստիտուտը, համապատասխան փոփոխություն կատարելով ՀՀ կառավարության 3.03.2011թ. թիվ 202 որոշման մեջ: Փոխարենը, ինստիտուտը կպարտավորվի ռազմական ստանդարտացման գծով ստեղծել 3 փորձագետից բաղկացած առանձին ստորաբաժանում և մասնագիտական ամենաբարձր մակարդակով ապահովել տարեկան շուրջ 50 ռազմական նոր ստանդարտների մշակումը՝ հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի զարգացման կարիքների համար:

### **Որոշեցին՝**

Առաջարկությունն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:

### **Լսեցին՝**

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Կարապետյանը, հիմք ընդունելով** «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասի 6-8-րդ կետերն, առաջարկեց նախապես հաստատել Ստանդարտացման ազգային մարմնի կառավարման խորհրդի առաջիկա նիստի օրակարգը ներառելով հետևյալ հարցերը՝

1. ստանդարտացման ազգային մարմնի գործունեության տարեկան արդյունքների հաստատման մասին.

2. ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականության իրականացման հեռանկարային ռազմավարության սահմանման մասին.

3. համապատասխան շահագրգիռ մարմինների և ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների առաջարկությունների հիման վրա ստանդարտացման ամենամյա ծրագրի ընդունումը:

### **Որոշեցին՝**

Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

**«Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, կառավարման խորհրդի քարտուղար Ենոք Ազարյանին՝**

1. կառավարման խորհրդի բոլոր անդամներին նախապես էլեկտրոնային տարբերակով ուղարկել Ստանդարտացման ազգային մարմնի գործարար ծրագիրը՝ ծրագիրն ուսումնասիրելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով.

2. առաջիկա կառավարման խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերի էլեկտրոնային տարբերակները նիստից 10 օր առաջ էլեկտրոնային տարբերակով ուղարկել կառավարման խորհրդի բոլոր անդամներին՝ հարցերն ուսումնասիրելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ,  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

«ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՏՆՕՐԵՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԵՆՈՔ ԱԶԱՐՅԱՆ